

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



ՀԱՅ ՈՐԲԱԽՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

S Ե Ղ Ե Կ Ա Գ Ւ Ր


ՀԱՅ ՈՐԲ. ԸՆԿ. ԳԱԶԻՐԵՒ ՀԱՏՈՒԱԾԻՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԾ



ԵՐԵՎԱՆ 1919 ՕԴՈՍ. 17-ԻՆ 1921 ԴԵԿ. 31


(Ընդհ. Փողովին ներկայացուած ՅՓ Ապրիլ 1922)



ՑՈԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ

Գ.Ա.Հ.Ի.Բ.

1922



200

ՀԱՅ ՈՐԲԱԽՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿԱԳՐԻ


ՀԱՅ ՈՐԲ. ԸՆԿ. ԳԱՅԻՐՔԻ ՀԱՏՈՒԱԾԻՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ



ՅՐՋԱՆ 1919 ՕԳՈՍ. 17-ԻՆ 1921 ԴԵԿ. 31


(Քննի. Ժողովին ներկայացուած ՅԹ Ապրիլ 1922)



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ

ԳՅԱԿԻՐՔԻ

1922



Մհեմայարդ Տիար Ատենապետ  
Հայ Որբ . Բնկ . Պատ . Բնդէ . Ժողովոյ  
Մայր Դիւանին

Աստ

Ա. - Թէ ինչը՞ի ՅԱՊԱՂԵՑԱԿ  
ՀՆԴՀ . ԺՈՂՈՎՈՅ ԴՈՒՄԱՐՈՒՄԸ

Մեր Տեղեկազրին խորքին մէջ մտնելէ առաջ,  
կը կարծենք թէ , պարտաւոր ենք Պատուարժան  
Բնդհանուր Ժողովիդ յայտնել թէ ինչո՛ւ յապազեցաւ  
սոյն Ժողովին գումարումը :

Այս ակամայ յապազումին առաջին և գլխաւոր  
պատճառը մեր ծանօթ վիճակահանութեան դժուարին  
գործն էր : Տոմսակներու ցրուումը մեր կարծածէն  
շատ աւելի երկար ժամանակ զրաւեց , և գործը  
ըստ կարի արդիւնաւոր ընելու համար , ինչպէս զիտէք ,  
հարկադրուեցանք թիրաժն ալ յետաձգել :

Աւրիշ պատճառ մը կընայ նկատուվէլ Որբախնաւ-  
միս քաւամեայ հաշիւներուն քննութեան երկարա-  
ձրգումը : Բնական է որ առանց քննուած և վաւե-  
րացուած հաշիւներու , չպիտի ուզէինք ներկայանալ  
Պատուարժան Ժողովիդ :

Բ. - ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ

Վարչութեանս ընտրութենէն չուրջ աարի մը  
յետոյ , Պըն , Միհրան Ալթունեան , գանձապետ ,

անձնական գրադմանց ծանրութեան պատճառաւ, հրաժարեցաւ Վարչութենէն, և Դիւանի կողմէն անոր հրաժարականին մերժումը անհետեւանք մնացած ըլլալով, քուէի առաւելութեան կարգով Պրն. Կարապետ Խանարեան հրաժիրուեցաւ մասնակցիլ Վարչութեանս, ուսկից քաղաքէն մեկնումին հետեւանքով հեռացած էր նաեւ Պրն. Մ. Տէր Սահակեան:

Պարոնայք Յակոր Մարգարանեան և Յակոր Ազագարմ, նոյնպէս անձնական պատճառներով, թէեւ հրաժարելու խօսքեր ըրբն, բայց մինչեւ անցեալ տարի իրենց գնահատելի մասնակցութիւնը բերին ժողովիս:

Բայց այդ թուականէն յետոյ, Վարչութիւնս հարկադրուած եղաւ իր գործունէութիւնը շարունակել չորս անդամներով:

### Դ.- 1919-ի ԱՊԹԻԼԵԱՆ ԴԵՊՔԵՐԸ

Ինչպէս պիտի յիշէք, երջանկայիշատակ որրախոյդ Ռ. Հերեանի եռանդուն ջանքերուն չնորհիւ որբախընամ գործը Եղիպտոսի մէջ մեծ զարկ ստացած էր 1919 Փետրուար և Մարտ ամիսներուն մէջ: Բայց ամիս մը յետոյ պատահած տեղական ծանր գէպքերը միծագոյն հարուածը տուին այնքան խանդավառ և այնքան յուսալից որրանուէր գործունէութեան: Եւ այդ տխուր ցնցումներուն ու մերայնոց կրած կորուսներուն հետեւանքով էր որ որբերու որդեգըրութեան իրը 200 յանձնառութիւնները իրենց նուազագոյն քանակին վերածուեցան, և մեր անդամները գրեթէ կէս առ կէս պակսեցան, որով այսօր Որբախնամս չուրջ 300 անդամներ միայն կը հաշուէ: Անկէ ի վեր տիրով տնտեսական ծանօթ տագնապն ալ, ի հարկէ, թոյլ չէր տար որ ճոխ հունձքերու յոյսեր տածէինք:

Այս անհպաստ պարագաները սակայն, ոչ, միայն  
մեզ չի յուսահատեցուցին, այլ վարչութիւնս դրդեցին  
ստեղծել, գտնել հասոյթի տարրեր աղբիւրներ, ըստ  
կարելւոյն արժանաւոր կերպով վարել կարենալու  
համար իրեն վստահուած գործը, ինչպէս պիտի տես-  
նըւի Տեղեկագրիս ընթացքին մէջ:

### Դ.՝ ԱԱՆՈՒԱԳԻԲ

Նախորդ Վարչութիւնը, Ազեքսանդրիոյ հետ հա-  
մաձայնարար, կազմած էր նոր Կանոնագիր մը, զոր  
ժողովը քննած և անոր մէջ ինչ-ինչ փոփոխութիւնը  
մոցուցած էր: Ընտրուած էին երեք լիազօրներ,  
որոնք, Ազեքսանդրիոյ լիազօրներուն հետ միասն,  
վերջական ձևու մը պիտի տային Կանոնագրին, ներ-  
կայացնելու համար զայն Ազգային Իշխանութեան  
վաւերացումին:

Երկու Քաղաքական Ժողովները առանձին առան-  
ձին քննելով Կանոնագիրը, իրենց կողմէ ալ փոփո-  
խութիւններ ըրտած էին, առանց մեզի հետ բանակ-  
ցելու և մեղմէ բացատրութիւններ լսելու, և ամիս-  
ներ յետոյ վաւերացուած վիճակով վերազարձուցած  
էին զայն: Հայ Որբ Ընկերութեան երկու Հատ-  
ուածներն ալ առարկեցին ներմուծուած փոփոխու-  
թեանց դէմ, որոնցմէ մէկը նոյն իսկ մեր գործելու  
անկախարիսնը կաշկանդելու բնոյրն ուներ:

Ազեքսանդրիոյ Հատուածը տեղւոյն Քաղաքական  
Ժողովին ինդքսեց որ, Կանոնագիրը անայլայլ պահե-  
լով, այդ փոփոխութիւնները թելազրութեան կամ  
հրահանգի ձեւին տակ հազարդուին իրեն: Այս խըն-  
դիրքը 1919 նոյ. 21-ին մատուցուած և 1920 Յուն-  
վար 6 ին և Ապրիլ 13 ին կրկնուած, դժբաղդաբար  
անհետեւանք թողուեցաւ, որով և ինդիրը մնաց  
մինչեւ օրս առկախ:

## Ե.- ՊԱՐՏԱՏ-ՊԱՐՈՒՊԱՅԻ ՈՐԲԱՆՅԱՅ

1918-ի աշնան, նախորդ Վարչութեան օրով սոյն ընդարձակ որբանոցը, մինչեւ 1200 որբերով, զիմած էր Որբախնամին օգնութեանը, ինդրելով տարեկան 4000 ոսկիի պիւտճէ մը, որ վերջէն բարձրացաւ 5000-ի:

Այդ թուականին Որբախնամին արամազրուած միջոցները թոյրասու ըլլալով ընդ առաջ երթալ այդ հեռաւոր վայրէն եկած խնդրանքին, արդէն խկ այլուր ստանձնած իր հոգերուն զուգընթացարար, և հաւատարիմ Ընկերութեանա ընդունած մէկ սկզբանքին՝ որ կ'արգիլէ անդածելի գումարներ պահել երբ պէտքը տիրական է, նախորդ Վարչութիւնը սիրով փութաց գոհացում տալ եղած զիմումին՝ հեռազրով խկ զրկելով, իր նպաստ, 1000 ոսկիի գումար մը, առանց ո և է տեւական յանձնառութեան:

Մեր սահմանափակ միջոցներով անկարելի էր անշուշտ վարել այդքան ընդարձակ գործ մը, եթէ մեզի տրուած չըլլար վայելել բարերասափիկ գործակցութիւնը և նիւթական ու բարոյական թանկաղին օժանդակութիւնը Միջագետքի Բրիտանական Զինուորական Խնամնութեանց: Եզիապասի Որբախնամ Ընկերութեան սոյն որբանոցին դրկած նպաստները կը յանդին ոչ նուազ քան 5000 եգիպ. ոսկին:

Նոր հագուստներու և նոր ծածկոցներու պէտքին առջեւ, որ ոչ նուազ քան քանի մը հազար ոսկիի պահանջմը կ'ենթադրէր, Աղեքսանդրիոյ քոյր Հատուածին հետ համախորհուրդ, թելազրեցինք Միջագետքի Հայ Տարեզրոլոց Նպաստամատոյց Մարմինին, որուն վերին հակողութեան տակ կը գտնուէր Որբանոցը, հանգանակութեան մը ձեռնարկել Հնդկա ստանի մէջ:

Տարեգրելոցը անմիջապէս հետեւանք տալով մեր թելազրութեան՝ Հոդկաստան զրկեց Պատուիրակութիւն մը, յանձին իր ժրաշան Առենապետին, Պրն. Մարտիրոս Գույշումձեանի, և ծանօթ ազգային Պրն. Երուանդ Տէրմիչեանի, (որ իր գործերուն սովորականութեան պատճառաւ քանի մը շարաթ միայն կրցւ խիստ արդիւնաւոր կերպով աշակցիւ Պրն. Մ. Գույշումձեանի):

Սոյն հանդանակութիւնը այնքան յաջող եղաւ որ՝ գյացած գումարներով կարելի եղաւ Որբանոցին սովորական պէտքերը լիուլի հոգալ, մինչեւ 1920 Օգոստոսի վերջերը, որ ատեն, տեղական խլքառումներուն հետեւանքով, Բրիտանական Զինուորական Խշոնութեան կարգադրութեամբ, որբերը, ապահովութեան համար, փոխազրուեցան Պարայի մօտերը, Նահր-Էլ-Օմար, և ասկէ քանի մը ամիս առաջ Երուսաղէմ, Ամերիկեան նպաստամատոյցի և Հայկական Բարեգործական Ընկերութեան խնամքներուն տակ:

## Զ. - ԱՆԹՈՒՐԱՅԻ ՈՐԲԱՆՈՑԸ

Եգիպտոսի Հայ Ազգային Միութեան 1919 Դեկտ.  
28 թուակիր նամակով եղած թելազրութեան վրայ, Աղեքսանդրիոյ հետ խորհրդակցարար, որոշեցինք ստանձնել կրթական հոգը այս Որբանոցին, որ Ամերիկեան Կարմիր Խաչի կողմէ Անթուրայի մէջ (Լիբանան) հաստատուած էր զինադադարէն ի վեր և ունէր 600 երկսեռ որբեր:

Ծրագրուած նպաստակին համար անմիջապէս, Ամերիկեան Կարմիր Խաչի մօտ մեղ փոխանորդող Պէյրութի Հայ Ազգ. Միութեան զրկեցինք 500 սոսի, որով կարելի եղաւ կազմել ուսուցչական խումբը և զարկ տալ որբերու ազգային դաստիարակութեան:

Այս գեղեցիկ և խստմնալից ձեռնարկը, սակայն, Որբանոցի կեանքին պէս, կարճատեւ եղաւ, ինչու որ քոնի մը ամիսներ յետոց Բրիտանական Զինուորական Խշանութեան հրահանգով, որբերէն մաս մը Հալէպ, մաս մըն ալ Աստանա, Այնթապ և ուրիշ տեղեր փոխազրուեցան, և այդ հաստատութիւնը ինքին դադրեցաւ գոյութիւն ունենալէ :

### Է.՝ ԿիլիկիոՅ ՊԱՏՈՒՔԻՐԱԿՈՒԹԻՒՆ

Նախորդ Վարչութեան տեղեկազրով ժողովիդ հազորդուած էր թէ ի՞նչպէս կազմուած էր Սուրբոց Պատուիրակութիւնը՝ յանձին Պրն. Պրն. Կ. Սէֆէրեանի (որ կը ներկայացնէր Եղիպատիայ Նպաստամատոցը և Հայ Բարեգործական Ընդհ. Միութիւնը), Մ. Եփրեմիանի (որ կը ներկայացնէր Եղիպատոփի Հայ Ազգ. Միութիւնը) և ողբացեալ Ռուբէն Հերեանի (որ կը ներկայացնէր Եղիպատոփի Հայ Որբախնամ Ընկերութիւնը): Սոյն Պատուիրակութիւնը, որուն Հայ Որբ. Ընկերութիւնը երկու անգամով 1000 Եղիպ. ոսկի տրամադրած էր, ունեցաւ խիստ օգտակար, զժքաղղարար կարճատեւ գործունէութիւն մը միայն: Եւ որովհետեւ Կիլիկիոյ պարենաւորման հարցին հետ որբերու խնամատարութեան գործը հետզհետէ լուրջ հանգամանք մը կը ստանար, Որբախնամը՝ Բրիտանական Զինուորական Խշանութեան հրաւէրին վրայ՝ 1919 Յունիսին ճամբայ հանեց նոր Պատուիրակութիւնը մը, բաղկացած փաստաբան Պ. Յ. Աղազարմէ և հանգուցեալ Հ. Աղատեանէ, վերջինս՝ խորհրդականի հանգամանքում:

Որբախնամի այս նոր Պատուիրակութիւնը ի ձեռնին ունէր հետեւեալ ուղեգիծը. Պէյրութի մէջ տեսնել Colonel Howker, Repatriation and Relief Admi-

nistrationի պետք, անոր միջոցով ստանոլու համար Բրիտանական Զբուռարական Խշխանութեան մօտ մեր անունով կեցած 2000 սոկիի գումարը, և եթէ կարելի էր, մեր ծրագրած ձեւնարկներն ապահովելու Բրիտանական Զբուռարական Խշխանութեան գործակցութիւնը, յար և նման Պաղպատ-Պագուպայի մէջ մեր ունեցած գործակցութեան։ Յետոյ այցելել Անժութուրա, Դամասկոս, Հռոմ, Հալէպ և Այնժապ, ուր բանալէ յետոյ ծրագրուած որբանոցը, անցնիլ Ատանա, առվույն Հայ Ազգ, Միութեան հետ բանակցելու համար Հայկական Արքանոցին փոխանցումին չուրջ։

Ահա այս ուղեղիծով մեկնեցաւ Պատուիրակութիւնը, և չորս ամսուանն ընթացքին յաջողեցաւ լրացընել իր պաշտօնը, խիստ զժուարին գործ, արդարեւ, որուն ծանրութիւնը միայնակ տարաւ Պրն։ Յակոր Աղազարմ, առարկայ դառնալով Որբ, Ընկ ու երկու չտուածներուն, անվերտապահ գնահատումներուն։

## Ը. - ԱՏԱՆԱՅԻ ՈՐԲԱՆՈՑ

Ողբացեալ Ռ. Հերեանի թելագրութեան վրայ էր որ Արքախնամը, 1919 Մարտէն սկսեալ, 500 տակոյ ամսականն նպաստ մը յատկացուցած էր յիշեալ Արքանոցին, Ատանայի Հայ Ազգ։ Միութեան միջոցաւ և անոր մատակարարութեամբ։ Քիչ յետոյ նոյն Ազգ, Միութիւնը, դարձեալ Հերեանի միջոցաւ, առաջարկեց Արքախնամա՝ խնամակալութեան փոխանցել Արքանոցը։ Եւ կիլիկիա մնենող մեր Պատուիրակութիւնը, իրեն արուած լիազօրութեամբ, 1919 Յուլիս 15-ին, յիշեալ հաստատութիւնը, որոշ պայմաններով, առաւ Արքախնամիս խնամակալութեան տակ, վերին հսկողութիւնը թողլով Ատանայի Հայ Ազգ։ Միութեան։

Հսենք անմիջապէս որ, սոյն Որբանոցը 400—500 որբեր միայն պատսպարելու յարմարութիւն ունենաւ լով, Որբախնամը սկիզբէն մինչեւ վերջը, իր յանձնառութեան հիմ բռնեց այդ թիւը միայն, և վերջի վերջոյ Որբանոցին յատկացուց տարեկան 8000 սակի: Եւ արդարեւ որչափ ատեն որ այդ թիւը պահուեցաւ, Որբանոցը կարճ ժամանակի մէջ խիստ անկանոն և ողորմենիվ վիճակէն ազատուեցաւ և հոն ստեղծուեցաւ բնականոն և խոստմնալից կացութիւն մը: Բայց այն օրէն որ Ատանայի Հայ Աղդ. Միութիւնը և Որբանոցին Վարիչ Մարմնը, հակառակ Որբախնամի չետրւած կամքին և բազմաթիւ ազգարարութիւններուն, անհաշիւ կերպով որբեր ընզունեցին ու անոնց թիւը հասցուցին ատեն մը մինչեւ 1300-ի, կարզը կանոնը խանգարուեցաւ հիմնովին: Իրաւ է թէ Թրանտական Զին, Խշանութիւնը մեր որբերուն հացին համար ալիւր և նորեկներուն համար տագաւարներ ու ամսական որոշ գումար մը կը հայթայիթէր, բայց Ատանայի Հայ Աղդ. Միութեան անփութութեան և ներքին Վարիչ Մարմնոյ յախուռն և անկանոն գործունէութեան երեսէն, այդ խոստմնալից հաստատութիւնը առժեկաց մեծապէս: Որբախնամ Ընկերութեան Աղկեսանդրիոյ Հատուածը, Գաճիրէի Հատուածին հետ համախորհուրդ, Վարիչ Մարմնոյ լուծումը հազորդելով Հայ Պատուիրակութեանց ներկայացուցիչ Պրն. Միհրան Տամատեանի, հեռազիրներով և նամակներով լիազօրութիւն տուաւ անոր՝ Որբանոցին հաշիւները առնելու, և Հայ Աղդ. Միութեան հետ խորհրդակցար, նոր և կարող վարչութեամբ մը օժտելու յիշեալ հաստատութիւնը:

Երբ այս կարգի ստիպովական գիմումներ Պրն. Մ. Տամատեանէ զատ նաեւ տեղւոյն Հայ Աղդային

Միութեան մօտ բոլորովին ապարդիւն կ'անցնէին, և անձկանօք սպասուած պատասխանները չէին գոր, և իրեւ հաշիւ անկանոն և հասարակ թուղթի կառը մը միայն կը ներկայացուէր մեզի, բնական էր որ խորհէինք կացութիւնը գարմաներու համար նոր պատուիրակ մը զրկել: Եւ արգարեւ այդ ծանր պաշտօնին առաջարկը վերասին սիրով ընդունեց Պրն. Յակոր Աղազարմ, որ այդ նպաստակին համար անցազիր ալ հանել առւառ, բայց զժրախս զաւգազիպութեամբ մը նոյն տաեն (1920) ծայր տուին Կիլիկիոյ ծանօթ խռովութիւնները: Մարաշի ջարդը, ընդհանուր խռովութիւնները, և լու... որոնց հետեւանքով և Կիլիկիոս մանելու ֆրանասկան արգելքնն պատճառաւ, առենի մը համար կարելի չեղաւ Ատանա հասցնել մեր Պատուիրակը:

Արգիւնքը ծանօթ է ամէնուս: Այս առթիւ կ'ուզենք յայտնել թէ՝ մեր ուրախութիւնը ճշմարտապէս անխառն պիտի ըլլար՝ եթէ այսօր այդ Որբանոցը իր ամբողջութեամբ, փոխանակ մէկ փոքր մասին, տեսնէինք Հայ հայանիի ներքեւ, փոխանակ հանդուրժելու որ օտար ձեռքեր տիրանան մեր որբերուն, որոնց համար այնքան զոհողութիւն ըրած էինք:

### Թ.՝ ԱՅՆԹԱՊԻ ՈՐԲԱՆՑ

Որբախնամ Ընկերութեանս Պատուիրակին, փաստաբան Պրն. Յակոր Աղազարմի ձեռքով բացուեցաւ այս Որբանոցը, 1919 Օգոստոսի սկիզբը, 45 երկսեռ որբերով, որոնց թիւը հետզհետէ բարձրացաւ մինչեւ 130-ի: Տեղույն վրայ կազմուեցաւ Վարիչ Մարմին մը՝ նախագահութեամբ Արքանապատիւ Տէր Ներսէս Քահն. Թավուգնեանի և անդամակցութեամբ Պրն. Պրն. Արմենակ Մանուկեանի, Արգիս Նազարեանի,

Յակոբ Համալեանի, Տօքթ. Գէորգ Արսլանեանի, Յակոբ Գարամանուկեանի և Եռևուովֆ Պարսումեանի: Նոր հաստատութեան իրեւ անօրէն պաշտօնի կանչըւեցաւ Պրն. Դադարոս Դըպիկեան, փորձառու, անձնուէր և վարչագէտ կրթական մշակ մը:

Վարիչ Մարմնի իմաստուն ջանքերուն, ինչպէս և Տնօրէնին ու պաշտօնէութեան անձնուէր ջանքերուն չնորհիւ, կարծ ժամանակի մէջ, Որբանոցը սկսած էր արդէն իր կանոնաւորութեամբը և արգիւնաւէտ գործունէութեամբը գնահատումի առարկայ զառնալ բոլոր ազգայիններու կողմէն անխտիր: Բայց մինչ ան կը պատրաստուէր իր անդրանիկ բեղուն շըջանը բոլորեւ, ահա ծագեցան Այնթափի ծանօթ գէտքերը: Անկարեիլ ըլլալով մեր որբերը այդ անապահով վայրին մէջ թողուէ, Ազեքանդրիոյ մեր քոյր Հաստուածին հետ խորհրդակցարար, որոշեցինք և խկոյն հրահանգ տուինք օր տուած Պէյրութ փոխադրել Որբանոցը, որբերով, պաշտօնէութեամբ և անհրաժեշտ գոյքերով միասին: Ու այսպէս ալ եղաւ, Որբանոցին պահեստի պաշտարը ամրոգջութեամբ յանձնելով Այնթափի ինքնապաշտպանութեան նուիրուած հերոսներուն: Այս փոխադրութեան միջոցին, ինչպէս նաեւ 1920 Յունիսին, անվտանգ, Պէյրութ հասնելէն յետոյ, քանի մը օր մեր որբերը մասնաւոր հոգածութեան առարկայ զարձան Ամերիկեան նպաստամատոյցին կողմէ:

Սոյն Որբանոցը քիչ մը ատեն միայն Պէյրութ մնալէ յետոյ փոխադրութեցաւ ձիւմիէ (Քաղաքէն Յժամ հեռու Զմմար Վանքի մօտ), ուր կը մնայ մինչեւ օրս, նոյն անօրէնութեան, նոյն պաշտօնէութեան հոգածութեան ներքեւ և վերին հսկողութեանը տակ արթուն և ժրաջան Վարիչ Մարմնի մը, բազկացած

Գերապատիւ Պօղոս վրդ . Յրիսէ , Յակոբ վրդ . Հաննաւ թուշէ , Պարմայք Զարուզն Փիրանեանէ , Կիրակոս Աֆարեանէ և Արչակ Գալուստեանէ , ամէնքն ալ նուիրուած պատուական անձնաւորութիւններ : Անցեալ Մայիսին եր Եւրոպա մեկնումին տոթիւ , Վարչական Մարմինէն ատիպուեցաւ հրաժարիլ Գերապատիւ Պօղոս վրդ . Արիս , Խիստ յարգուած , զործունեայ գէմք մը Պէլրութիւ և շրջակայից մէջ , անոր տեղը պաշտօնի հրաւիրուեցաւ նոյնպէս պատուական Հայ գէմք մը , յայնձնն յայտնի առեւտրական Պրն . Արրանամ Մարտիկեանիւ Վարիչ Մարմինի բոլոր անդամնները Պէլրութարնակ են :

Այս Որրանոցին կեանքք , զարդացումի բնականն ուղիով մը , յառաջ կ'երթայ մեքենուկան ծշգութեամբ և կանոնաւորութեամբ , չնորհիւ աշալուրջ և անձնուէր պաշտօնէութեան , Տնօրինէն սկսեալ մինչեւ խոնարհագոյն մշակը : Հաստատութիւնս ունի 126 որր (89 մանչ , 37 աղջիկ) , 30 տարբեր քաղաքներէ : Ամէնքն ալ առողջ , կայտառ , լու հագուած և բարեկիրթ , պատիւ կը բրեին իրենց հաստատութեան , զոր անվիրապահօրէն (ափապար) անուաննելու չեն վտանիր Հայ և օտար ալցելուններ :

Հայ Որրախնամ Ընկերութիւնս վերջերս օժտեց սոյն հաստատութիւնը Աշխատանոցալ մը , ուր բարձրագոյն կարգերու երկսեռ որբեր յարմար արհեստներու կը հետեւին ըստ կարելոյն : Որբուհիներու ձեռագործի Աշխատանոցը արդէն իր երախայրիքը ընծայեց՝ զրկելով Որրախնամիս 80 սոկոյ արժողութեամբ գեղեցիկ ձեռագործներ :

Որբախնամ Ընկերութիւնս , տարեկան 3600—4000 սիւտաձէով մը կը հսկայ Որբախնոցին բոլոր ծախքերը , բացի ալիւրէն , զոր բարեսրաօրէն ատեն

մը մասակարարեց Թբանասական Զինուորական Իշխանութիւնը։ Մինչեւ ցարդ սոյն հաստատութեան վրայ ծախսած ենք շուրջ 10,000 ռոկի։ Խւրաքանչիւր որբ տարեկան նուազագոյնը 24 եղիսկ։ ռոկիի ծախսք մը կ'ենթազրէ։

### Ժ. - ՀԱՆԴԵՐՁԱՐԱԿԻ

Գահիրէի և Ազեքանողրիոյ Հատուածներուն Տիկնանց Մասնախումբերը, 1919-ի ներգաղթի շրջանին մասնաւանդ, աշխուժիւ լծուեցան մեր որբերուն հանդերձեցիններու պատրաստութեան գործին։ Այս գործին ծանրութեան կեզրոնը յետոյ փոխազրուեցաւ Ազեքանողրիոյ, Գահիրէի հատուածին Տիկնանց Մասնախումբը ստանձնած ըլլալով միջազգային վիճակահանութեան մը սորքումին անհրաժեշտ առարկաներ և նուէրներ հաւաքելու և տոմսեր ցրուելու հոգը։

### Ժ. - ՏԻԿՆԱՐԱՅ ՄԱՍՆԱԽՈՒՄԲԻ ՄԲ

Տիկնանց Մասնախումբը ժամանակ մը նախկին կազմով պահուելէ յետոյ, վերակազմուեցաւ հետեւ եալ կերպով։ Տիկնայք Հայկանոյշ կ. Պալեան (Առենապետակի), Առէլ Թէրձիման (Բ. Առենապետակի), Լոլա Կոկանեան (Գանձարահ), Տիրուհի Ս. Պալզգծեան, Արտքի Սէլվածեան, Առթենիկ Զրագեան, Մատլէն Բարթողեան, Հայկանոյշ Յ. Մարգարանեան, Էօմէնի Տէօլէնեան, Վերգին Գրիգորեան, Օրիորդք. Պայծառ Գասապեան (Առենապրուհի), Ատրիէն Գորակեան, Ազնիւ Կոկանեան, Էլիզա Իշխանեան, Թագուհի Մարտափ, Հերմինէ Պ., Կիւմիւշեան։ Օրիորդք. Աստան Քոյրեր վերակազմութենէն առաջ թէեւ հրաժարեցան, և թէեւ իրենց հրաժարականը Վարչութեանս կողմէ

միահամուռ մերժուեցաւ ու իրենք դարձեալ պնդեցին, բայց կը շարունակեն ամէն առիթէ օգտուիլ իրենց թանկապին ծառայութիւնները անձնուիրարար թերելու որբափնտամ գործին:

Տիկնանց Մասնախումբին զբաղումը, Հանգերածարանի գործը Աղեքսանդրիոյ Հասուածին տիկններուն ձեռքը կեզրոնացնելէ յևաոյ, կը զատնար զբլիւաւոր կերպով մեր հասոյթի ազրիւրները մշակելու և ճոխացնելու մէջ: Անոնք խիստ կարեւոր բաժին մը ունիցած են ներկայացումները և Որբախնամի օրացոյցներուն ցրուումը արդիւնաւորելու գործին մէջ: Խակ միջազգային վիճակահանութիւնը իրենց յղացումն ու իրենց գործն է, զործ՝ որ որբերու գանձին թերառ ոչ նուազ քան 1000 եզիդ, ուկիֆ զուտ հասոյթ մը:

### ԺԲ.-ՎԻՃԱԿԱՆԱԿԱՆԱՅԻԹԻՒՆԸ

Հայ Որբախնամ Ընկերութեան անդրանիկ պատուիրակին, յաւերժ ողբացեալ Ռուբէն Հերեանի ներկայութենէն օգտուելով, Աղեքսանդրիոյ և Գանիրէի հասուածները, ինչպէս վերեւ յիշուեցաւ, 1919 փետրվարի վերջերը և Մարտի սկիզբները սարքեցին որբանուէր անմոռանալի հաւաքայթներ, ուր լուսահոգի Որբախոյզին անդիմազրեկի թովչանքին և այլ բանախօսներու ներշնչուած պատգամներուն ազգեցութեան տակ, Եգիպտահայլ, պատմական մնալու սահմանուած անօրինակ խանդավառութեամբ և զոհարերութեամբ մը, մէկ շաբթուան մէջ զիտցաւ որբախնամ գործին համար նուրբել կամ արձանազրել հազարաւոր սոկիներ և արժէքաւոր առարկաներ, սրբեզրութիւնը ստանձնելով իրը 200 որբերու ևն:

Սոյն առարկաներուն մէկ մասը նոյն տարին խակ վիճակահանութեան զրուած ըլլալով Աղեքսանդրիոյ

մէջ, մնացած գործի գոլիք տուարկաները ցուցակա-  
գրութեամբ յանձնեցինք մեր սոկերիչ ազգայիններէ  
ընտրուած Մարմնի մը, (բաղկացած Պարտնայք Աւան  
Համամճեանէ, Մինաս Յակոբեանէ, Հայկ Աւագեանէ,  
Կարապետ Խանարեանէ, Թովմաս Թօվուզեանէ),  
որուն գործը եղաւ ծախուելիքները աճուրդով ծո-  
խել, լուսացնները ներկացանալի վիճակի մէջ զնել,  
և զննէ երեք կտոր ճաշուկաւոր և արժէքաւոր գո-  
հարկէններ հայթայթել մեղի, կազմելու համար վի-  
ճականանութեան տաաջին երեք դիմուոր պարզե-  
ները: Հայ Ոսկերիչներու Յանձնախումբը իրեն վրա-  
տահուած գործը կատարեց և զնանատումները ըստ-  
հիմուելով օրուան արժէքներուն վրայ:

Տիկնանց Մանախումբը վիճականանութիւնը  
աւելի արգիւնաւոր ընծայելու համար՝ տուննէ տուն,  
և խանութէ խանութի պոտելով, յաջողեցաւ մէկտեղ  
րերել թուռվ 190 սիրուն և արժէքաւոր տուարկաներ,  
197 սոկի արժողութեամբ, իսկ առաջին տասը կա-  
րեւոր պարզեւները կը ներկայացնէին 553 սոկիի  
գումար մը, որով պարզեւներուն ընդհանուր արժէքը  
կ'ըլլայ 750 եգ. սոկի: Բուել է 200 թիւեր շահեցան  
750 սոկիի արժէքով տուարկաներ:

Այս կարեւոր ձեռնարկին մէջ Վարչական Փողո-  
վիս գրեթէ միակ գործը եղաւ ներքին Դործոց նա-  
խարարութենէն ձեռք բերել տարին անդամ մը տեղի  
ունենալիք որբանպատ մէծ վիճականանութեան մը  
արտօնագիրը (16 Հոկտ. 1920 թուակիր և 1069 թը-  
ւահամար) որով տարեկան կանոնաւոր հասոյթի աղ-  
թիւք մը ունեցած եղաւ Հայ Որբ: Էնկերաւթիւնը:  
Այս առթիւ կ'ուղէինք նաև աւելցնել թէ նոյն իսկ  
վիճականանութեան տամակներու գետեզումը, ըլլայ  
եղիպտոսի մէջ, ըլլայ արտասահման, կատարեց գըւ-


խաւորաբար մեր Տիկնանց Ամանախումբը, որուն  
խորին երախտագիտութիւն միայն կը պարափնք:

### ԺԴ.- ՕԺԱՆԴԱԿ ՅԱՆՉԱԽՈՒՄԲԻՄԲ

*Ծառ Ներքին Կանոնադրի արամազրութեան, ուշ  
նեցանք նաև Արանց Օժանդակ Յանձնախումբը մը,  
հետեւեալ կերպով՝ կազմուած։ Պարանայք Մկրտիչ  
Սովիկեան (Ասենապեա), Քարպիկ Վարդանեան (Ա-  
տենալովիր), Լուսեր Կիւղէլիմեան (Գանձապահ), և  
խորհրդականներ՝ Պարանայք Յարութիւն Գարզանեան,  
Մինսո Մինասեան, Վահէ Պօյտեան, Ցոլակ Շաքար-  
եան։ Անցեալ տարուան հայերէն անդրանիկ ներկա-  
յացումը կը պարանքնք սոյն Յանձնախումբին, որուն  
օժանդակութիւնը չառ գնահատեալի եղաւ նաև անոր  
յաջորդող Օրերայի ներկայացումբն մէջ։ Օժանդակ  
Յանձնախումբին անդամներէն երկուքը Ամերիկա  
մեկնած, և երկուքը անձնական պատճառներով  
հրաժարած ըլլարով, հարկ կ'ըլլայ վերակազմել զայն  
նորընտիր Վարչութեան ձեռամբ։*

### ԺԴ.- ԳԱՆՉԱԽԱԿ

Մամնաւոր համաձայնութեամբ մը Որբաինամ  
Փանձնակի գործը յանձնուած էր Հ. Ե. Ք. Ընկե-  
րակցութեան, Վեր. Հայկազուն Խանդամուրի վար-  
չութեամբ։ Վեր. Հայկազուն Խանդամուր, ամուր  
խանդով մը լծուեցաւ այս գեղեցիկ գործին և չորս  
տարուան ընթացքին յաջողեցաւ մեր որբերուն գան-  
ձին ապահովել 2000 եդ. սոկիի հոյակաս գումար մը։  
Եր այս սոկերաբառ յաջողութեանը համար մենք  
երբեք չի փորձուեցանք պայմանագրամկան տիտղոս  
մը փակցնել իր ճակաբին, այլ բաւականացանք ճանչ-



նալ զինքը Հայ Որբութեան ծառայութեանը նուիրուած սրտոտ աշխատաւոր մը:

Վարչութիւնս պատրաստել տուած ըլլալով նոր գանձանակներ, իր յաջորդին կը թողու յարմարագոյն եղանակով արդիւնաւորել հասոյթի այս լոիկ բայց տեւական ազրիւը:

### ԺԵ.- ԿԱՂԱՆԴՁԵՔԻ ԹԵՐԹԻԿՆԵՐ

Հաճելի նորութիւն մը եղաւ հասոյթի այս նոր գլուխը, զոր անակնունելի յաջողութիւն մը եկաւ պասկել գեղեցկօրէն: Երկու տարի առաջ, 1919 ի վերջերը, կոչ մը ուղղեցինք գեռատի կամաւորներու, երկու շաբթուան ընթացքին, մասնաւոր թերթիկներով, հաւաքելու որբերուն կազանդչէքը: Մեր կոչին խկոյն պատասխանեցին 362 մանչեր և աղջիկներ Գահիրէն, Աղեքսանդրիայէն, Զակազիկէն, Բօր-Մափտէն և Նիկոսիայէն, ուր տրուած ժամանակամիջոցին մէջ հաւաքեցին չուրջ 1200 Անգլ. սկիփ չքեղ զումար մը: Խոստացուած երկու մրցանակները արրուեցան երկու առաւելագոյն հաւաքողներու, Ա. Մրցանակ Պրն. Արսէն Գ. Ճիյէրճեանի (Աղեքսանդրիայէն), որ յաջողած էր հաւաքել 156 եդ. սկիփ, Բ. Մրցանակը ստացաւ Գահիրէն Օր. Անայիս Արուլան, որ յաջողած էր հաւաքել 52 եդ, սկիփ 85 եդ. դահեկան: Այս երկուքին պատկերները, ինչպէս նաև բոլոր գեռատի կամաւորներուն անուններն ու հաւաքած գումարներուն հաշւմները հրատարակուած են անցեալ տարուան Որբանիի թիւ 10 ին մէջ.

Այս անդրանիկ փորձէն խրախուսուած, անցեալ տարի արտասահմանի գեռատի հայորդիներն ալ ուղեցինք մասնակից ընել այս օրհնարեր գործին: Եւ ուրախ ենք յայտարարել որ՝ դարձեալ գտնուեցան

գեռատի երկսեռ սրտոս կոմաւորներ որոնք եղիպտոսէն, Սուստանէն, Հաղէշխատանէն, Կիպրոսէն, Առևիայէն, Ֆրանսացէն, Ամերիկայի Միացեալ Նահանգներէն, նոյն իսկ Հարաւային Ամերիկայէն մեր որբերուն զանձնն ապահովեցին չուրջ 600 Անգլ. ակիֆի կոկիկ գումար մը, զոր՝ նկատի ունենալով ամենուրեք տիրոս նիւթական տագնապը, կրնանք զարձեալ զեղեցիկ յաջողութիւն մը համարել:

Այս երկրորդ տարին առաւելողոյն գումար հաւաքողներն են.

ԵԴԻԳՑԱՍԽՆ. — Օր, Օրթանա Մասրաֆ, Օր, Շաքէ Քարքերգեան, Պրն. Նեւոսն Գափամաճեան:

ՍՈՒՏԱՆԽՆ. — Պրն. Պետրոս Սալլըրեան, Պրն. Նորայր Չոլաքեան:

ՀԱՊԼԵՇԽՍԼԽՆ. — Պրն. Մուշեղ Թերզեան, Պրն. Հայկ Երզնկացեան, Պրն. Յովհ. Ատանալեան, ԿիՊՐՈՍԽՆ. — Պրն. Վահէ Նիկողոսեան:

ՍՈՒԻՐԻԷՅԽՆ. — Պրն. Վահէ Գալէմքեարեան, Պրն. Մարտիրոս Գալուստեան:

ՖՐԱՆՍԱՅՅԽՆ. — Պրն. Լեւոն Պարկիրճեան:

Առանձին պատկերներ, խմբանկարներ, և նույիրահաւաքութեան հաշիւները ամփոփուած են Որբանիի վերջին թիւն մէջ:

Դեռատի կամաւորներու որբանովաստ ձեռնարկը այլեւս քաջաքացիութեան իրաւունք չահած ըլլալով, որոշուեցաւ մշակել զայն, պարագաներուն թոյլ տուած չափով:

## ԺԶ.՝ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԱԿՅՈՒԹԻՒՆ

Այս գլուխին մէջ տռաջին տեղը կը բռնէ, անտարակոյս, Եթովպիոյ մեր Մասնաճիւղը, զոր կազմած են և կը վարեն յաջողապէս խումբ մը պատ-

ուական, կտրիճ հայուշիներ, իրենց ձեռնարկին կապուած պահելով Ատիս-Ապապայի վոքքաթիւ բայց սրտոտ Հայ գաղութին թանկազին համակրանքն ու աշակցութիւնը:

Օրինաւոր կերպով ընտրուած 7 հոգինաց Տիկնանց Վարչութիւն մը, օրինակելի անձնութրութեամբ և տիպար կանոնաւորութեամբ, կը վարէ որոճելն ու հաշիւները, և մեր որբերուն գանձին կ'ապահովէ տարեկան շուրջ 300 սոկիի կարեւոր գումար մը: Նորդնոտիր Վարչութեան անդամուշիներն են Տիկնայք Անժէլ Յ. Երդնկացեան (Ատենապետուհի), Նարդուհի Տէրուէրեան (փոխ Ատենապետուհի), Յր. Նարդուհի Թերզեան (Ատենապետուհի), Տիկնայք Նուարդ Փուղարեան (փոխ Ատենապետուհի), Զմբուխատ Միսեան (Գանձապետուհի), Մարիճա Պարսիկեան (խորհրդականուհի):

Պարբերական գնահատելի նպաստներով մեր ձեռնարկին օժանդակած են Ամերիկայէն Տիթրութի Հայ Որբախնամ Տիկնանց Միութիւնը, Նիւ Պրիվորթի Հայ Տիկնանց Միութիւնը, Թրօյի Հայ Աւետարանական Եկեղեցւոյ համայնքն ու հովիւը՝ Վեր. Ս. Մ. Ռէձպեան, Ֆիլատէ Գիոյ նորակազմ Հայ Աւետարանական Եկեղեցւոյ հովիւը՝ Վեր. Բ. Ս. Լեւոնեան, Լին բնակող Տիսր Աւաքել Մատուրեան, Ֆրէզնոյի «Զանասէր» ընկերութեան նախագահ Վեր. Ս. Վ. Երամեան, Պուէնոս Այրէսէն Պըն. Խորայէլ Արծրունի, Ֆրանսայէն, Փարիզի Ազգային Պատուիրակութիւնը, ձեռամբ նուազարի, Բօր-Սախտէն՝ Ազնուափայլ Տիկն Մարի Մարտափ, Նիկոսիայէն Հայ Յառաջդիմասէր Բնկերութիւնը, Գահիրէէն՝ Գերապատիւ Վարդան վրդ. Խաչերեան և ն. որոնց նուէրները ժամանակին արձանագրուած են Ըսկերութեանս պաշտօնաթերթին, Որքունիի մէջ:

## ԺԵ.- ԱՃԽԱՏԱՆՔԻ ԲԱԺԱՆՈՒՄ

Որբախնամի գործերուն արագ և աւելի կանոնաւոր ընթացք մը տալու համար բանաւոր դատուեցաւ 1919 Դեկտեմբերին սկսեալ երկու քոյր հասուածներու մէջ աշխատանքի բաժանում կատարել հետեւեալ կերպով։ Արտասահմանի հետ յարաբերութիւն պահելու, մասնաճիւղերու հետ թղթակցելու և եկամուռ հայթայթիւնը հոգը յանձն առաւ Գահիրէի հատուածին Վարչութիւնը, իսկ որբանոցներու մատակարարութիւնը, Հանգերձարանի Վարչութիւնը և Որբանիի հրատարակութիւնը բաժին ինկան Սզեքսանդրիոյ հատուածին Վարչութիւն, որուն քով կը պահուին խնամքով մատակարարութեան բոլոր հաշուեթութիւնը։ Երկու Վարչութիւնները պարբերաբար տեղեկութիւններ կուտան իրարու, իրենց գործունէութեանը մասին, և կարեւոր կամ բացառիկ խընդիրներու համար միայն կը գումարեն սրատուիրակային կամ լիակատար ժողովներ։ Գործելու այս կերպը գործնական թուեցաւ մեզի, և արդիւնքն ալ ցոյց տուաւ որ չենք սխալած։

## ԺԲ.- ՅԱՏԿԱՑՈՒԱԾ ՄԻԱՆՈՒԱԴ ՆՊԱՍՏՆԵՐ

Բացի Անթուրայի, Պաղտատ-Պագուպայի, Աստանայի և Այնթապի (այսօր ձիւնիէի) որբանոցներէ, որոնց տեւական գումարներ զրկուած են, Որբախնամը միանուագ նոպաստներ յատկացուցած է կեսարիոյ որբերուն՝ 500 ոսկի, Պոլսոյ Ա. Պատրիարքին միջոցով, որմէ ստացուած է օրհնութեան գիր, Բրօֆ. Խաչատուրեանի թելազրութեամբ և Պաղտատի Հայ Տարագրելոց Մարմինին միջոցով 500 ոսկի՝ Համատանի

Վերջացնելէ առաջ մեզի հաճելի պարտականութիւն կը համարենք մեր սրբագին չնորհակալութիւնը յայտնել բոլոր անմինց, հեռաւոր կամ մօտ, որոնք մեր գործին համար բարախող սիրո մը ունեցան: Մասնաւոր չնորհակալութիւն Տիկնանց Մասնախութիւն, Ատիս Ապավագի Որբաննամ Տիկնանց Մասնաձիւղին, և ինչպէս Եգիպտոսի նոյնալէս արտասահմանի բոլոր գեռասի կամաւոր խումբերուն:

### ԻԲ.- ՀԱՅՈՒԵՑՈՒԹԻՒԹԻՒՆ

Հաշուեկչիուր (1919 Օդոսաս 17 էն մինչեւ 31 Դեկտեմբեր 1921) կցուած է ներկայ Տեղեկադրիս:

Հայ Որբ. Ընկերութեան Գահիրէի Վարչութեան

Ատենագլուիր

Ատենագետ

Կ. ՍԻՄՈՆ

Յ. Թ. ԳԱՅԱՆԵԱՆ

Խորհրդականք.

Կ. ՄԱԼԻԿԱՍԵՍՆ

Կ. ԻԱՆԱՐԵԱՆ


— \* —

Հասցէ Հայ Որբ. Ընկ. Գահիրէի Հատուածին.

Society for Armenian Orphans.

P. O. Box 1498

Cairo, Egypt



# ՀԱՅ ՈՐՔԱԽՈՇԱՄ ԸՆԿԵՐՈՒԹ

Հ Ա Շ Ո

1919 ՕԳՈՍՏՈՒ 1-ԻՆ ՄԻ

## Մ Ա Խ Տ Ք

			ԵՎ. ԴԱՏ.	460.969.5
Նախորդ Շրջանէն փոխանցուած (լստ Հայութելուին 31-7-1919)				
Անդամավճար 1 0դոստ. — 31 Դեկտ. 1919		12.721.—		
» 1920 Շրջանի մէջ		24.164.9		
» 1921 » »		13.799.5	50.685.4	
Արդեգրութիւն 1 0դոստ. — 31 Հոկտ. 1919		50.325.—		
» 1920 Շրջանի մէջ		55.400.—		
» 1921 » »		9.750.—	115.475.—	
Պատկանակալ 1 0դոստ. — 31 Դեկտ. 1919		12.076.—		
» » 1920 Շրջանի մէջ		67.395.5		
» » 1921 » »		16.262.—	95.733.5	
Նուէր և Հանդանակութիւն 1 0դ. — 31 Դեկտ. 1919		17.006.—		
» » 1920 Շրջանի մէջ		48.664.—		
» » 1921 » »		9.474.—	75.144.—	
Հանդէսական Ներկայացում 1920 » »		38.617.—		
» » 1921 » »		58.730.—	97.347.—	
Մասնաճիւղը 1 0դ. — 31 Դեկտ. 1919		17.273.6		
» » 1920 Շրջանի մէջ		57.505.3		
» » 1921 » »		24.777.—	99.555.—	
Զանազաններ 1 0դ. — 31 Դեկտ. 1919		65.746.2		
» » 1920 Շրջանի մէջ		171.089.7		
» » 1921 » »		73.034.3	309.870.2	
Վիճականութիւն 1921 Շրջանի մէջ			3.000.—	846.811.5
				1.307.781.—

## Գ Ր Ա Մ Ե Ւ Գ Ո Յ Ք

ԵՎ. ԴԱՏ.

Պահնք Նասիօնալի մէջ պահեստի գրամ	84.81.—	
Գանձապետին քով պատրաստ գրամ	23.93.—	10.874.—
Տիկնամաց Յանձնախմբին քով գրամ	16.44.—	
13 Արժեթուղթ Քրէտի Յօնսիէ	12.500.—	
Գրեանք, Դասագիրք	5.850.—	
Գրի մնքնայ, Մամուլ	1.500.—	
Ն. Վ. Պօղոս Նուլպարի իւզմաներկ պատկերը	300.—	
Դրասելուսն, սեղան, աթոռ և լու.	2.500.—	
Վիճականութիւն Համար Զարդեղէն և առարկայ	60.000.—	
Թօմոզոլայի համար զանազան առարկաներ	800.—	
1 Գրադանշպահարան	400.—	85.494.— 96.368.—

# ❖ ♫ Գահիքի Հասնած

• **ԵԿԱԴՐ**

19ԵՒ 31 ԴԵԿԱՅՈՒՅՆ 1921

614

Քննուած, հաստատված և բնդէ, Փողովոյ Պատ, Դիւանին մատուցուած է:

Անդամք Գանձապետ Առենապետ

#### **Ա. ԽԱՆՈՒԹՅՈՒՆ**

## Դանձապետ Առենապետ

ՏՐՈՒ 6. Թ.ԴԱՅԱՆԵԱՆ

#### In humans life at site

suchen

ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵ Ա  
ՔՐԵԼԵԱՆ Մ. Ա. ԲՐՈՒՏԵԱՆ Փ. Դ

Հաստատուած Քաղաք. Փողովոյ 1922 Յունի 23-ի նիստին մէջ:  
Առաջին փախանորդ  
Տ. Ա. Մ. Օ. Վ. Ա. Խ. Հ. Ա. Հ. Ա. Հ.

ԳԱԱ Ֆիզնարար Գիտ. Գրադ.



FL0321320

7  
92

---

Հասցե Հայ Որբ. Ընկ. Թափրէի Համուսծին.

Society for Armenian Orphans.

P. O. Box 1498

Cairo, Egypt

---

